ՀՀ, Գեղարքունիքի մարզպետ՝ Կարեն Սարգսյանին

https://jam-news.net և iwpr.net միջազգային
կայքի Հայաստանի թղթակից

Գայանե Մարկոսյանից (Սարգսյանից)
077296657, markosyangayane2@gmail.com

Դիմում

Հարգելի պրն. Սարգսյանին

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցադրումներին.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից ձեռնարկված պատերազմական գործողությունները տեղի են ունեցել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանակից տարածքներում, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

-Արդյո՞ք կատարվել է ուսումնասիրություն, հաշվառում, թե մարզում ո՞ր ոլորտներից, քանի՞ բիզնես, ի՞նչ չափի, ի՞նչ բնույթի վնասներ է կրել: Եթե այո, խնդրում եմ տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ վնաս կրած բիզնեսների մասին՝ մարզ, համայնք, կազմակերպության անվանում, գործունեության ոլորտ, կրած վնասի բնույթը կամ չափը ձևաչափով:
Եթե չի կատարվել ուսումնասիրություն ու հաշվառում, խնդրում եմ պարզաբանել՝ ինչո՞ւ:

-Եթե արվել է ուսումասիրություն, խնդրում եմ նշել՝ հատկապես ի՞նչ բնույթի աջակցության կարիքի մասին են բարձրաձայնում մարզի տուժած բիզնեսները: Որքանո՞վ են հաշվի առնվել/առնվում նրանց տեսակետները՝ աջակցության պետական-ոչ պետական ծրագրերի կազմման գործընթացում: Խնդրում եմ նշել մարզպետարանի կողմից արված/արվելիք աջակցության ծրագրերի առաջարկների կամ ծրագրերի նախագծերի մասին՝ եթե այդպիսիք կան, որոնք կազմվել/կազմվում են այդ կարիքները հաշվի առնելով: Խնդրում եմ տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրի ծավալի, ժամկետների, աջակցության տեսակի, ոլորտի ու այլնի մասին:
Եթե նման ծրագրային առաջարկներ չկան կամ չեն նախատեսվում, խնդրում եմ պարզաբանել՝ ինչո՞ւ:

- Տեղեկացված եք արդյոք, թե ի՞նչ աջակցության ծրագրեր են իրականացվում կամ նախատեսվում սեպտեմբերյան պատերազմական գործողությունների հետևանքով տուժած մարզի գործարարների համար՝ միջազգային կառույցների կամ տեղական

հասարակական կառույցների կողմից: Եթե այո, խնդրում եմ տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջազգային կառույցի, իրականացվող/իրականացվելիք ծրագրի ժամկետների, ծավալի, աջակցության բնույթի, ուղղվածության ու այլնի մասին:

-Մարզի մի շարք համայնքներ մինչ վերջերս հանդիսացել են զբոսաշրջային ամենացանկալի վայրերից՝ ՀՀ քաղաքացիների ու դրսից այցելող զբոսաշրջիկների համար: Ի՞նչ քայլեր է նախատեսում իրականացնել մարզպետարանը ՝ այդ համայնքների զբոսաշրջային հետաքրքրությունը վերականգնելու, զբոսաշրջային հոսքերը խթանելու ու հարյուրավոր զբոսաշրջային բիզնեսների գործունեության վերականգնմանը նպաստելու համար:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝ markosyangayane2@gmail.com հասցեով:

Հարգանքով՝ Գայանե Մարկոսյան

19.10.2022